Արձանագրություն N 3

ԾՔ-ԳՀԾՁԲ-18/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 17 օգոստոս 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամներ՝ Վ.Ամիրխանյան

Ա.Մեսրոպյան

Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ Ն.Խաչատրյանը նիստին չի մասնակցում,քանի որ գտնվում է հերթական արձակուրդում:

1. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում «Էրեբունի մաքրություն» ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից

16.08.2018թ. ներկայացված եզրակացությունը /կցվում է/՝ մասնակիցը հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 2238 ՀՀ դրամ, որը համաձայն <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, չի գերազանցում օրենքով նախատեսված շեմը:

1.4 Եզրակացությամբ արձանագրվել է, որ պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեք դաշտում տվյալները չեն համապատասխանում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի բ) կետի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ Համաձայն Կարգի 47-րդ և 48-րդ կետերի ՝ ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. օգոստոսի 21-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Հայրապետյան

անդամներ՝ _____ Վ.Ամիրխանյան

_____ Ա.Մեսրոպյան

_____ Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ _____ Ա.Ավետիսյան